ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԽԱՊԱ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝
գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Վեդի «19» հուլիսի 2019 թ.
Ժամը՝ 11^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Վ. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ Ռ. Եղիազարյան
Ա. Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար Ա.Վարդանյան

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,
- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ
- Հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության շտկման մասին,
- Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի հուլիսի 15-ին, կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեն սույն թվականի հուլիսի 18-ին տրամադրվել է հարցման մասին տեղեկատվությունը:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի հուլիսի 15-ին, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը սույն թվականի հուլիսի 18-ին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

3. Հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության շտկման մասին

3.1 Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն Ա/Ձ <<Թեհմինե Աղաջանյան>>-ը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն:

3.2 Հանձնաժողովի քարտուղարը համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման կարգի 47, 48 կետերի 1 աշխատանքային օրվա ընթացքում 18.07.2019 թ. ծանուցել է Ա/Ձ <<Թեհմինե Աղաջանյան>>-ին երեք օրվա ընթացքում շտկել թերությունը:

3.3 Ա/Ձ <<Թեհմինե Աղաջանյան>>-ը վերը նշված կարգի կետերին համապատասխան 18.07.2019 թ. կատարել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը կից (անդորագրերի սկանավորված տարբերակը):

4. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

4.1 Հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա «ԽԱՊԱ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել Ա/Ձ <<Թեհմինե Աղաջանյան>>-ին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-կետի համաձայն անգործության ժամկետ կիրառելի չէ:

4.4 Հանձնաժողովի քարտուղարին.

Պայմանագրի կնքման նպատակով «ԽԱՊԱ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում

ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Հանձնաժողովի նախագահ		Վ. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ		Ռ. Եղիազարյան
		Ա. Բաղդասարյան
Հանձնաժողովի քարտուղար		Ա.Վարդանյան